Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-8
4-75

ՆԱԽԱՇԱՒԻՂ

Ծառն արմատով է ծառ.
Տունն հիմամբ է տուն։

ԿԱԶՄԵՑ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Երրորդ Տպագրութիւն

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1905

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԵԿ

№ 198

ՎԵՐԱԾՆՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
13 ԴԵԿՏ. 1918 թ. ԹԻՖԼԻՍ.

24 .05. 2013

8554

491.99-8
4-75

04 MAY 2010

ՆԱԽԱՇԱՒԻՂ

428
120-40

Ծառն արմատով է ծառ.
Տունն հիմամբ է տուն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱԶՄԵՑ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

1002
8554

Երրորդ Տպագրութիւն

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1905

Дозволено Цензурою. 18• Марта 1904, г. Тифлисъ.

Ա Զ Դ

Գրաբառի ուսման սկզբնաւորութիւնը դիւրացնելու համար կազմուեցաւ այս նախաշաւիղը: Եթէ նոր սկսող աշակերտը կարողանայ սորա իւրաքանչիւր յօդուածի անծանօթ բառերն ուղիղ հասկանալ, աշխարհաբառի օգնութեամբ իւրաքանչիւր նախադասութիւնն ուղիղ վերլուծել և թարգմանել, և ի վերջոյ քերականական ամենապարզ ձևերը հեշտութեամբ ճանաչել, նա այդքանով բաւական պաշար գտած կըլինի գրաբառի ուսումն աւելի յաջող շարունակելու հետևեալ տարիներում: Ձեռնարկիս մէջ ծրագրած իւրաքանչիւր վարժութիւնը, կրկնութիւնն և ամփոփումը պէտք է լինի աշակերտի ստուգանաբար զարգացման հետևանք. ուստի և օգտակար կըլինի առանց շտապելու կանգ առնել իւրաքանչիւր յօդուածի վրայ և վարժեցնել աշակերտին նախ ուղիղ առոգանութեան և ուղղագրութեան կանոնների մէջ, յետոյ հարց ու պատասխանների և բառերի տեղափոխութեան միջոցով նոր նախադասութիւններ կազմել տալ, կամ խոնարհել և հոլովել տալ նախ աշխարհաբառ և ապա գրաբառ: Նմանապէս օգտակար կըլինէր մի նոր յօդուածի ուսումնասիրութիւն սկսելուց յառաջ կրկնել տալ նախընթացը. իսկ շրջանի վերջում անհրաժեշտ է անցածից մի ընդհանուր ամփոփումն անել. այդ նպատակի համար ձեռնարկիս վերջում դրինք կանոնաւոր խոնարհման և հոլովման աղիւսակներ:

Կ. Կ.

Ա. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՅԻ

1. Աստուած յիշեց Նոյին. քամի հանեց և ջուրը կանգնեցաւ. աղբիւրները կալնուեցան. անձրևը կտրուեցաւ. ջուրը, քանի գնում պակասում էր։

յիշեց=յիշեաց	քանի գնում=երթայր
Նոյին=զՆոյ.	աղբիւրները=աղբերք.
քամի=հողմ.	կալնուեցան=խցան.
հանեց=ած, էած.	կտրուեցաւ=արգելաւ.
կանգնեցաւ=դադարեաց.	պակասում էր=նուազէր.

Եւ յիշեաց Աստուած զՆոյ. և ած Աստուած հողմ. և դադարեաց ջուրն. և խցան աղբերք և արգելաւ անձրև. երթայր ջուրն և նուազէր։

2. Տապանը նստաւ Արարատի սարերում. Նոյը բացեց տապանի պատուհանը և բաց թողեց ագռաւին։ Նա դուրս եկաւ և էլ չդարձաւ։

բացեց=երբաց.	սարերում=ի լերինս.
բաց թողեց=արձակեաց.	Արարատի=Արարատայ.
դուրս եկաւ=ել.	էլ=անդէն, անդրէն.

Եւ նստաւ տապանն ի լերինս Արարատայ։ Երբայ Նոյ զպատուհան տապանին. և արձակեաց զագռաւն։ Եվ և անդէն ոչ դարձաւ։

3. Նոյը բաց թողեց աղաւնուն։ Նա կրկին յետ եկաւ նորա մօտ դէպի այն տապանը. որովհետև դեռ ջուրը բռնած ունէր երկրի բոլոր երեսը։

կրկին=անդրէն.
աղաւնուն=զաղաւնին.
դէպի այն տապանը =ի տապան անդր.
բռնած ունէր=ունէր.
յետ եկաւ=դարձաւ.
նորա մօտ=առ նա.
բոլոր=ամենայն.
որովհետև=զի.

Եւ արձակեաց զաղաւնին։ Եւ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր. զի դեռ ջուր ունէր զամենայն երեսս երկրի։

4. Նոյը ձեռքը մեկնեց և բռնեց աղաւնուն. և էլի առաւ նորան իւր մօտ նոյն տապանի մէջ։ Եւ եօթն օր էլ սպասեց։

մեկնեց=ձգեաց.
բռնեց=կալաւ.
էլի=անդէն.
առաւ=առ, էառ.
նորան=զնա,
ձեռքը=զձեռն.
իւր մօտ=առ իւր.
նոյն տապանի մէջ =ի տապան անդր.
սպասեց=դադարեաց.
էլ=ևս.
եօթն օր=աւուրս եօթն.

Եւ ձգեաց զձեռն. և ընկալաւ. և առ զնա անդրէն առ իւր ի տապան անդր։ Եւ դադարեաց ևս աւուրս եօթն։

5. Նոյը եկաւ, բաց թողեց աղաւնուն այն տապանից։ Երեկոյին դարձաւ աղաւնին նորա մօտ. իւր բերանում բռնած ունէր ձիթենու տերև։ Նոյը հասկացաւ, որ ջրերը ցածացել են գետնի երեսից։

եկաւ=դարձաւ, եկն.
այն տապանից=ի տապանէ անտի.
երեկոյին=ընդ երեկս.
իւր բերանում=ի բերան իւրում.
գետնի երեսից=յերկրէ.
ձիթենու=ձիթենւոյ.
հասկացաւ=գիտաց.
որ=թէ, զի.
ցածացել են=ցածուցեալ են.

Եւ դարձաւ, արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի։ Եւ դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս, և ունէր տերև ձիթենւոյ ի բերան իւրում։ Եւ գիտաց Նոյ, թէ ցածուցեալ են ջուրք յերկրէ։

6. Էլի եօթն օր սպասեց. կրկին բաց թողեց աղաւնուն։ Նա այլ ևս չվերադարձաւ նորա մօտ։ Ջուրը պակասեցաւ երկրի երեսից։ Նոյը բացեց տապանի ծածկը և տեսաւ, որ ջուրը պակասել էր երկրի երեսից։

պակասեցաւ=նուազեաց. տեսաւ=ետես.
երեսից=յերեսաց. որ=զի.
ծածկ=ձեղուն. պակասել էր=նուազեալ էր.
այլ ևս չվերադարձաւ=ոչ ևս յաւելաւ դառնալ.

Եւ դադարեաց աւուրս եօթն ևս. և դարձեալ արձակեաց զաղաւնին: Եւ ոչ յաւելաւ դառնալ առ նա: Եւ նուազեաց ջուրն յերեսաց երկրի: Եւ երբայ Նոյ զձեղուն տապանին. և ետես, զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի:

7. Նոյը դուրս եկաւ. նորա կինը, նորա որդիքը, նորա հարսները, բոլոր դազանները, բոլոր սողունները, բոլոր թռչունները նոյնպէս դուրս եկան այն տապանից: Նոյը սեղան շինեց Աստծու համար. և առաւ բոլոր սուրբ անասուններից և բոլոր սուրբ թռչուններից. և մատաղ արաւ այն սեղանի վերայ:

նորա հարսները=կանայք որդւոց նորա.
նոյնպէս=և՛. և՛.
դուրս եկան=ելին.
Աստծու համար=Աստուծոյ.
այն սեղանի վերայ =ի վերայ սեղանոյն.
մատաղ արաւ=եհան ողջակէզ.
բոլոր սուրբ անասուններից=յամենայն անասնոց սրբոց.
բոլոր սուրբ թռչուններից=յամենայն թռչնոց սրբոց.

Եւ ել Նոյ. և կին: նորա, և որդիք նորա, և՛ կանայք որդւոց նորա, և՛ ամե-

նայն դազան, և՛ ամենայն սողուն, և՛ ամենայն թռչուն ելին ի տապանէ անտի: Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ. և առ յամենայն անասնոց սրբոց և յամենայն թռչնոց սրբոց. և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյն:

Բ. ԿՐԿՆՈՒԹԻՒՆ.

8. Եւ յիշեաց Աստուած զՆոյ.
և ած Աստուած հողմ.
և դադարեաց ջուրն:
Եւ խցան աղբերք.
և արգելաւ անձրև.
երթայր ջուրն և նուազէր:
Եւ նստաւ տապանն ի լերինս Արարատայ:
9. Երբայ Նոյ զպատուհան տապանին:
և արձակեաց զագռաւն.
ել և անդէն ոչ դարձաւ:
Եւ արձակեաց զաղաւնին:
Եւ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր.
զի դեռ ջուր ունէր զամենայն երեսս երկրի:
10. Եւ ձգեաց զձեռն և ընկալաւ.
և առ զնա անդրէն առ իւր ի տապան անդր:
Եւ դադարեաց ևս աւուրս եօթն.
և դարձաւ, արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի:

Եւ դարձաւ աղաւնին ընդ երեկս.
և ունէր տերև ձիթենւոյ ի բերան իւրում։
Եւ գիտաց Նոյ. թէ ցածուցեալ են ջուրք յերկրէ։
11. Եւ դադարեաց աւուրս եօթն ևս.
և դարձեալ արձակեաց զաղաւնին։
Եւ ոչ ևս յաւելաւ դառնալ առ նա։
Եւ նուազեաց ջուրն յերեսաց երկրի։
Եբաց Նոյ զձեղուն տապանին.
և. տեսս, զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի։
Եւ ել Նոյ.
և՛ կին նորա. և՛ որդիք նորա, և՛ կանայք որդւոց նորա, և ամենայն գազան, և՛ ամենայն սողուն, և՛ ամենայն թռչուն ելին ի տապանէ անտի։
Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ.
և առ յամենայն անասնոց սրբոց և յամենայն թռչնոց սրբոց.
և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյն։

Գ. ԱՄՓՈՓՈՒՄՆ

12. Աշխարհարարի օգնութեամբ որոշել տալ հեռեւեալ իւրաքանչիւր բայի դէմքը, թիւը, ժամանակը եւ եղանակը. խոնարհել տալ դէմքերը եզակի եւ յոգնակի. գտնել տալ լծորդը (բայի սկիզբը) եւ խոնարհել տալ ներկայի բոլոր ձեւերը.

յեշեաց, ած, դադարեաց, խցան, արդելաւ, նստաւ, եբաց, արձակեաց, ել, դարձաւ, ձգեաց,

ընկալաւ, առ, գիտաց, յաւելաւ, նուազեաց, եհան, ելին, շինեաց, եհան.

երթայր, նուազէր, ունէր։

13. Որոշել տալ հեռեւեալ իւրաքանչիւր բառի ուղղականը. բացատրել հայցականի, նախատրիտրականի եւ յոգնակի ուղղականի կազմութիւնը. իւրաքանչիւր ուղղականից կազմել տալ այդ երեք ձեւը. ծանօթութիւն տալ անորոշ հայցականի մասին.

զնոյ, հոգմ, զպատուհան, զաղաւնին, զամենայն երեսս. զձեռն, զնա, աւուրս, տերև, զձեղուն, սեղան, ողջակէզ. աղբերք, ջուրք, որդիք, կանայք.

ի լերինս, ի տապան, ի բերան, առ իւր, առ նա։

Դ. ԱՆԴՐԱՆԿՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲԱՅ

14. *Իսահակը ծերացաւ. և նորա աչքերը տկարացան. կանչեց իւր մեծ որդուն Եսաւին. և ասաց նորան. Ահա ես ծերացել եմ. և չգիտեմ իմ մեռնելուս օրը. առ հիմայ քու գործիքներդ. և գնա դաշտը. և բռնէ ինձ համար որս. և պատրաստէ ինձ համար կերակուրներ, ինչպէս որ ես եմ սիրում. և բեր, տուր ինձ, որ ուտեմ. և օրհնէ քեզ իմ անձս, քանի դեռ մեռել չեմ։*

տկարացան=վատեցին։ հիմայ=արդ.
կանչեց=կոչեաց. քու գործիքներդ=զգործի քո.
մեծ=երէց. օրհնէ=օրհնեսցէ.
ծերացել եմ=ծերացեալ եմ. բռնէ՛=որսա՛.
չգիտեմ=ոչ գիտեմ. պատրաստէ՛=արա՛.
իմ մեռնելուս օրը=զօր վախճանել իմոյ։ կերակուրներ=խորտիկս.

ինձ համար=ինձ.
ինչպէս որ=որպէս և
սիրում եմ=սիրեմ.
տուր=մատո՛.
որ ուտեմ=զի կերայց.
քանի դեռ մեռել չեմ=
մինչչև մեռեալ եցեմ.

Ծերացաւ Իսահակ. և վատեցին աչք նորա. կոչեաց զԵսաւ, զորդի իւր զերէց. և ասէ ցնա- Ահաւասիկ ծերացեալ եմ ես. և ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ. արդ ա՛ռ զու զգործի քո. և ել ի դաշտ. և որսա՛ ինձ որս. և արա՛ ինձ խորտիկս, որպէս և ես սիրեմ. և բե՛ր, մատո՛ ինձ, զի կերայց և օրհնեսցէ զքեզ անձն իմ, մինչչև մեռեալ իցեմ։

12. *Ռեբեկան լսեց, որ Իսահակը խօսում էր իւր որդու հետ։ Եսաւը գնաց դաշտ իւր հօր համար որս բռնելու։ Ռեբեկան խօսաւ իւր որդու Յակոբի հետ և ասում էր. Ես իսկոյն լսեցի քու հօրից դ, որ խօսում էր քու եղբօրդ հետ և ասում էր. «բեր ինձ համար որս. և պատրաստէ ինձ համար կերակուրներ, որ ուտեմ և օրհնեմ քեզ». այժմ լսէ ինձ, որդի՛, ինչ որ քեզ կ'ասեմ. գնա՛ դաշտը և այնտեղից ա՛ռ երկու դէր և լաւ ուլեր. ես կըպատրաստեմ կերակուրներ քու հօրդ համար, ինչպէս որ նա սիրում է. և կըտաս քու հօրդ, և կ'ուտէ, որպէսզի օրհնէ քեզ քու հայրդ, քանի դեռ մեռել չէ։*

լսեց=լուաւ.
խօսում էր=խօսէր.
հետ=ընդ.
իւր որդու հետ=ընդ որդւոյ իւրում.
կըպատրաստեմ=արարից,
կ'ուտէ=կերիցէ.
քու հօրից=ի հօրէ քումմէ.
օրհնեմ=օրհնեցից.
այժմ=արդ.
լսէ՛=լո՛ւր.
ինչ որ=որպէս.
որս բռնելու=որսալ որս.
խօսաւ=խօսեցաւ.
իսկոյն=ահա՛.
լսեցի=լուայ.
կ'ասեմ=պատուիրեմ,
դէր=փափուկ.
լաւ=ընտիր.
կըտաս=մատուսցես.
որպէսզի=զի.
քանի դեռ մեռել չէ=
մինչչև մեռեալ եցէ.

Եւ լուաւ Ռեբեկա, զի խօսէր Իսահակ ընդ որդւոյ իւրում։ Գնաց Եսաւ ի դաշտ որսալ որս հօր իւրում։ Եւ խօսեցաւ Ռեբեկայ ընդ Յակոբայ որդւոյ իւրում. և ասէ՝ Ահա՛ լուայ ես ի հօրէ քումմէ, զի խօսէր ընդ եղբօր քում. և ասէր "բե՛ր ինձ որս. և արա՛ ինձ խորտիկս, զի կերայց և օրհնեցից զքեզ"։ և արդ, որդեա՛կ իմ, լսո՛ւր ինձ, որպէս ես պատուիրեմ քեզ. գնա՛ դու ի դաշտն և ա՛ռ ինձ անտի երկուս ուլս փափուկս և ընտիրս. և արարից զնոսա խորտիկս հօր քում՝ որպէս և սիրէ. եւ մատուսցես հօր քում, եւ կերիցէ, զի օրհնեսցէ զքեզ հայր քո՝ մինչչեւ մեռեալ իցէ։

16. Ասում է Յակոբ իւր մօրը Ռեբեկային. «իմ եղբայրս Եսաւը մազոտ մարդ է. և ես անմազ եմ. կարելի է հայրս շօշափէ ինձ և անպատիւ լինիմ նորա առաջը, և իմ վերայ քաշեմ անէծք և ոչ օրհնութիւն»։ Եւ ասում է նորան իւր մայրը. «իմ վերայ լինի այն անէծքը, որդեակ, միայն դու լսէ իմ խօսքերիս և գնա բեր ինձ համար»։ Գնաց, առաւ և բերեց իւր մօր համար։ Եւ պատրաստեց կերակուրներ, ինչպէս որ սիրում էր նորա հայրը։

Ռեբեկային—ցՌեբեկայ.
մազոտ—թաւ.
անմազ—լերկ.
մարդ—այր.
կարելի է—գուցէ.
շօշափէ—շօշափիցէ.
լինիմ—լիցիմ.
անպատիւ—արհամարհոտ.
նորա առաջը—առաջի նորա.
քաշեմ—ածիցեմ.
անէծք—անէծս.
նորան—ցնա.
իմ վերայ—ի վերայ իմ, յիմ վերայ.
իմ խօսքիս—ձայնի իմում.
գնա—երթ.
բե՛ր—ած.
բերեց—ած, էած.
պատրաստեց—արար.
ինչպէս—որպէս.

Եւ ասէ Յակոբ ցՌեբեկայ մայր իւր. “եղբայր իմ Եսաւ այր թաւ է եւ ես լերկ. գուցէ շօշափիցէ զիս հայր իմ, եւ լիցիմ առաջի նորա իբրեւ արհամարհոտ, եւ ածիցեմ ի վերայ իմ անէծս եւ ոչ օրհնութիւն„։ Եւ ասէ ցնա մայրն իւր. “յիմ վերայ անէծք այն, որդեակ, բայց միայն լուր ձայնի իմում. եւ երթ, ած ինձ„։

Գնաց եւ առ, ած մօր իւրում։ Եւ արար խորտիկս, որպէս եւ սիրէր հայր նորա։

17. Ռեբեկան առաւ իւր մեծ որդու լաւ պատմուճանը և հագուց իւր փոքր որդուն Յակոբին. և ուլի մորթիներն անցուց նորա թևերին և նորա մերկ վզին. և տուեց իւր որդու Յակոբի ձեռքը այն կերակուրն ու հացը, որ պատրաստեց։ Եւ տարաւ իւր հօրը, և ասաց. Հայր. և նա ասում է. Ո՞վ ես դու, որդեակ։ Յակոբն ասաց հօրը. «ես եմ քու անդրանիկդ Եսաւը. պատրաստեցի, ինչպէս որ ասացիր ինձ. վեր կաց, նստիր ու կեր իմ որսիցս, որ օրհնէ ինձ քու անձդ։

առաւ—էառ, առեալ.
լաւ—ազնիւ.
հագուց—զգեցոյց.
փոքր—կրտսեր, կրցեր.
ուլի մորթիներ—ուլենիս.
անցոյց—ագոյց.
թևերին—ի բազուկս.
վզին—ի վերայ պարանոցի.
պատրաստեցի—արարի.
ասացիր ինձ—խօսեցար ընդ իս.
վեր կաց—արի՛,
նստի՛ր—նիստ.
իմ որսիցս—յորսոյ իմմէ.
ինձ—զիս.

Եւ առեալ Ռեբեկայ զպատմուճանն ազնիւ որդւոյ իւրոյ երիցու, զզեցոյց Յակոբայ որդւոյ իւրում կրցերոյ. եւ ուլենիսն ագոյց ի բազուկս նորա, եւ ի վերայ մերկոյ պարանոցի նորա, եւ ետ զխորտիկն եւ զհացն, զոր արար, ի ձեռս

Յակոբայ որդւոյ իւրոյ։ Եւ տարաւ հօր իւրում. եւ ասէ. Հայր իմ. եւ ասէ. Ո՞վ ես դու, որդեակ. եւ ասէ Յակոբ. "Ես եմ Եսաւ անդրանիկն քո, արարի, որպէս եւ խօսեցար ընդ իս. արի՛, նի՛ստ. եւ կեր յորսոյ իմմէ. զի օրհնեսցէ զիս անձն քո„։

Ե. ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

18. Ծերացաւ Իսահակ.
և վատեցին աչք նորա.
կոչեաց զԵսաւ զորդի իւր զերէց.
և ասէ ցնա.
Ահաւասիկ ես ծերացեալ եմ.
և ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ.
արդ ա՛ռ դու զզործի քո.
և ել ի դաշտ.
և որսա՛ ինձ որս.
և արա՛ ինձ խորտիկս, որպէս և ես սիրեմ,
և բե՛ր, մատո՛ ինձ,
զի կերայց և օրհնեսցէ զքեզ անձն իմ,
մինչչև մեռեալ իցեմ։
Եւ լուաւ Ռեբեկա.
զի խօսէր Իսահակ ընդ որդւոյ իւրում.
և ասէ,

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գնաց Եսաւ ի դաշտ. որսալ զհօր
իւրում։
Եւ խօսեցաւ Ռեբեկա ընդ Յակոբայ որդ-
ւոյ իւրում. և ասէ.
Ահա լուայ ի հօրէ քումմէ,
զի խօսէր ընդ եղբօր քում և ասէր.
«բե՛ր ինձ որս, և արա՛ ինձ խորտիկս,
զի կերայց և օրհնեցից զքեզ».
և արդ, որդեա՛կ իմ, լսո՛ ինձ, որպէս ես
պատուիրեմ քեզ.
գնա՛ դու ի դաշտն.
և ա՛ռ ինձ անտի երկուս ուլս փափուկս
և ընտիրս.
և արարից զնոսա խորտիկս հօր քում,
որպէս և սիրէ.
և մատուցես հօր քում.
և կերիցէ, զի օրհնեսցէ զքեզ հայր քո.
մինչչև մեռեալ իցէ։

1002
8757

19. Եւ ասէ Յակոբ ցՌեբեկայ մայր իւր.
«եղբայր իմ Եսաւ այր թաւ է, և ես լերկ.
գուցէ շօշափիցէ զիս հայր իմ,
և լինիցեմ առաջի նորա իբրև արհամար-
հոտ,
և ածիցեմ ի վերայ իմ անէծս և ոչ օրհ-
նութիւն»։
Եւ ասէ ցնա մայրն իւր.
«յի՛մ վերայ անէծք այն, որդեա՛կ.
բայց միայն լսո՛ ձայնի իմում,
և երթ, ած՛ ինձ»։
Գնայ և առ, ած մոր իւրում։

Եւ արար խորտիկս, որպէս և սիրէր հայր նորա։
Եւ առեալ Ռեբեկայ զպատմուճանն աղնիւ որդւոյ իւրոյ երիցու,
զդեցոյց Յակոբայ որդւոյ իւրում կրցերոյ,
և ուլենիսն ագոյց ի բազուկս նորա և իվերայ մերկոյ պարանոցի նորա.
և ետ զխորտիկն և հացն, զոր արար,
ի ձեռս Յակոբայ որդւոյ իւրոյ։
Եւ տարաւ հօր իւրում.
և ասէ. Հայր իմ.
և նա ասէ. Ո՞վ ես դու, որդեակ։
Եւ ասէ Յակոբ ցհայրն.
«ես եմ Եսաւ անդրանիկն քո.
արարի, որպէս և խօսեցար ընդ իս.
արի, նիստ, և կեր յորսոյ իմմէ,
զի օրհնեսցէ զիս անձն քո»։

Զ. ԱՄՓՈՓՈՒՄՆ

20. Աշխարհաբառի օգնութեամբ որոշել հեթեւեալ իւրաքանչիւր բայի դէմքը։ թիւը, ժամանակը եւ եղանակը. գտնել իւրաքանչիւրի լծորդը եւ խոնարհել արդեն յայտնի բոլոր ձեւերը։

ծերացաւ, վատեցին, կոչեաց, լուաւ, գնաց, խօսեցաւ, լուայ, արար, զդեցոյց, ագոյց, ետ, տարաւ, խօսեցար, խօսէր, ասէր, սիրէր։
գիտեմ, սիրեմ, պատուիրեմ, սիրէ, առէ.
ա՛ռ, ե՛լ, որսա՛, արա՛, բե՛ր, մատո՛, լո՛ւր, գնա՛, ե՛ր թ, ա՛ծ, արվ՛, նի՛ստ, կե՛ր.

կերայց, օրհնեցից, օրհնեսցէ, արարից, մատուցես, կերիցէ. շօշափիցէ, լենիցիմ, ածիցեմ.

21. Որոշել հեթեւեալ իւրաքանչիւր բառի ուղղականը. որոշել հայցական եւ նախդրիւտրական հոլովները, բացատրել սեռականի, վերջանոլովտրականի եւ բացառականի օրինակները։

զնսաւ, զորդի, զերէց, զօր, զգործի, որս, խորտիկս, զքեզ, երկուս, ուլս, զնոսա, զիս, անէծս, օրհնութիւն, զպատմուճանն, ուլենիսն, զհացն, զխորտիկն, զոր, ցնա, ի դաշտ, ցՌեբեկայ, ի բազուկս, ի ձեռս, ցհայրն։

Նորա, իւր, վախճանի, իմոյ, քո, իմ, որդւոյ, իւրոյ, երիցու, ի վերայ մերկոյ պարանոցի.

ինձ, ընդ որդւոյ, ընդ Յակոբայ, ընդ եղբօր, քեզ, հօր քում, ձայնի իմում, մօր իւրում, Յակոբայ, որդւոյ, իւրում, կրցերոյ, ընդ իս։

ի հօրէ քումմէ, յորսոյ իմմէ, ի տապանէ, յամենայն անասնոց սրբոց, յամենայն թռչնոց սրբոց։

Է. ԿՈԶՈՒՄՆ ՄՈՎՍԻՍԻ

22. Եւ Մովսէս արածէր զխաշինս աներոյ իւրոյ.
և ածէ խաշինսն յանապատ.
և եկն ի լեառն Աստուծոյ ի Քորէբ։
Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով
հրոյ ի միջոյ մորենւոյ։
Եւ տեսանէր, զի մորենին վառեալ էր հրով.
և ոչ այրէր մորենին։
Եւ ասէ Մովսէս.
«անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ.
զի՞ է, զի ոչ այրի մորենին»։

խաշն=տաւար, անասնեղէն. լեառն=սար.
անապատ=անբնակ տեղ. հուր=կրակ.
զի՞=ինչպէս, ինչո՞ւ, ինչ։ մորենի=թուփ, մորի ծառ.

Լուծել՝ զխաշինս, խաշինսն, զտեսլէն, զայն, յանապատ, ի լեառն, ի Քորէբ, աներոյ, Աստուծոյ, հրոյ, լերոյ, մորենւոյ, Տեառն, նմա, ի միջոյ, բոցով, հրով։

23. Կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենւոյն.
ասէ. Մովսէս, Մովսէս.
և նա ասէ. Զի՞ է։
Եւ ասէ.
«մի մերձենար այսր.
լոյծ զկօշիկս քո յոտից քոց,
զի տեղիդ, յորում կաս դու, երկիր սուրբ է»։
Եւ ասէ ցնա.
Ես եմ Աստուած հօր քոյ,
Աստուած Աբրահամու և Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ։

մերձենալ=մօտենալ. լուծանել=քանդել, բանալ,
այսր=այստեղ. արձակել.

Լուծել՝ զնա, զկօշիկս, ցնա, մորենւոյն, քո, հօր, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, ի միջոյ, յոտից, Մովսէս, տեղիդ, յորում։

24. Եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր.
քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ։
Եւ ասէ Տէր ցՄովսէս,
«տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ,
և լսի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոց.

արդ եկ, առաքեցից զքեզ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց.
և հանցես զժողովուրդ իմ զորդիս Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց.

դարձուցանել=դարձնել, լսանել=լսնել, ցած դալ.
շուռ տալ, առաքել=ուղարկել զրկել,
քանզի=որովհետև. հանել=դուրս բերել,
երկնչիլ=վախենալ. աղատել.
հայել=մտիկ անել. արքայ=թագաւոր.

Լուծել՝ զերեսս, զչարչարանս, զնոսա, զքեզ. զժողովուրդ, զորդիսն, ցՄովսէս, առ Փարաւոն արքայ, ժողովրդեան, Եգիպտացւոց, Իսրայէլի, իմ, իմոյ, ի ձեռաց, յերկրէն։

25. Եւ ասէ Մովսէս ցԱստուած.
Ո՞վ եմ ես, զի երթայցեմ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց և հանիցեմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց։
Եւ ասէ Աստուած ցՄովսէս.
«այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի,
Տէր Աստուած հարցն ձերոց առաքեաց զիս ցոս ձեզ և ասէ.
Այց արարից ձեզ.
և հանից զձեզ յերկրէ չարչարանաց Եգիպտացւոց յերկիր, որ բղխէ զկաթն և զմեղր։
Եւ լուիցեն ձայնի իմում»։

այց առնել=օգնութեան հասնել, օգնել.
բղխել=թափել, վազեցնել.

Լուծել՝ ցԱստուած, ցորդիսն։ յերկիր, առ Փարաւոն արքայ, առ ձեզ. զորդիսն, զիս, զձեզ, զկաթն, զմեղր. հարցն, ձերոց, չարչարանաց, ձայնի, իմում, ձեզ։

26. Պատասխանի եւ Մովսէս և ասէ.
«եթէ չհաւատայցեն ինձ,
և ոչ լուիցեն ձայնի իմում,
զինչ ասացից ցնոսա»։
Ասէ ցնա Տէր.
Զինչ է այդ, որ ի ձեռին քում է։
Եւ նա ասէ. Գաւազան։
Եւ ասէ. Ընկեա զդա ի գետին։
Եւ ընկէց զնա ի գետին։
Եւ եղև օձ։
Եւ փախեաւ Մովսէս ի նմանէ։
Եւ ասէ Տէր ցՄովսէս,
«ձգեա զձեռն քո.
և բուռն հար զոտանէն»։
Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր,
և բուռն եհար զոտանէն,
Եւ եղև գաւազան ի ձեռին նորա։

ընկենուլ—քցել, նետել.
բուռն հարկանել—ձեռք տալ, բռնել.
փախչիլ, փախնուլ—փախնել.
բուռն հար զոտանէն—պոչից բռնէ,
տուտն—պոչ.

Լուծել՝ ցնոսա, ցնա, ի գետին. զդա, զնա, զձեռն, ձայնի, իմում, ինձ. ի ձեռին. ի նմանէ, զոտանէն։

27. Եւ ասէ ցնա դարձեալ Տէր,
Մ՛րկ զձեռն քո ի ծոց քո։
Եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր։
և եհան զնա ի ծոցոյ իւրմէ.
և եղև ձեռն նորա բորոտ իբրև զձիւն։

Եւ ասէ ցնա.
Մ՛րկ զձեռն քո ի ծոց քո։
Եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր.
և եհան զնա ի ծոցոյ իւրմէ։
և դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ
ի գոյն մարմնոյ իւրոյ։

արկանել—քցել, դնել.
հաստատել—փոխուել. լինել.

Լուծել՝ ցնա. ի ծոց, ի նոյն, ի գոյն. զձեռն, զնա, զձիւն նորա, իւր, մարմնոյ, իւրոյ. ի ծոցոյ իւրմէ. մ՛րկ, արկ, եհան, հաստատեցաւ։

28. Եւ ասէ Մովսէս ցՏէր։
«աղաչեմ զքեզ, Տէր.
չեմ բաւական.
զի նրբաձայն և ծանրալեզու եմ ես»։
Եւ ասէ Տէր ցՄովսէս,
«ո՞վ եհ բերան մարդոյ.
կամ ո՞վ արար զխուլն և զհամր, զականին
և զկոյր.
ո՞չ ապաքէն ես Աստուած.
և արդ երթ.
և ես բացից զբերան քո.
և խելամուտ արարից զքեզ, զոր պարտ
իցէ խօսել.
ո՞չ աւանիկ կայ Ահարոն եղբայր քո.
խօսեսցիս ընդ նմա.
և տացես զպատգամս իմ ի բերան նորա,
և ես բացից զբերան քո և զբերան նորա.
և խելամուտ արարից զձեզ»։

աղաչել=խնդրել. ականի=աչք ունեցող, ոչ կոյր.
բաւական=կարող. ոչ ապաքէն=չէ որ.
Ներբաձայն=բարակ ձայն ունեցող. խելամուտ առնել=միտք տալ. խելք տալ.
Ծանրալեզու=ծանր խօսող. դժուար խօսող. աւանիկ=ահա.
համբ=մունջ անլեզու. պատգամ=պատուէր, հրաման.

Լուծել՝ ցՏէր, ի բերան. զքեզ, զխուլն, զհամբ, զականին, զկոյր, զբերան, զպատգամս, զձեզ. քո, նորա, իմ. մարդոյ, ընդ նմա:

29. Գնացէ Մովսէս.
և դարձաւ առ աներ իւր և ասէ ցնա.
«դարձայց և երթայց առ եղբարս իմ յԵգիպտոս.
և տեսից, թէ տակաւին կենդանի՞ իցեն»։
Եւ առեալ Մովսիսի զկին և զմանկունս իւր,
և եհան զնոսա ի դրաստս.
և դարձաւ յԵգիպտոս։
Եւ պատմեաց Մովսէս Ահարոնի զամենայն պատգամսն։
Գնացին Մովսէս և Ահարոն.
և ժողովեցին զամենայն Ծերակոյտ որդւոցն Իսրայէլի.
և խօսեցաւ Ահարոն զամենայն պատգամսն,
զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի.
և արար նշանս առաջի ժողովրդեանն։
Եւ հաւատաց ժողովուրդն և ուրախ եղև.
խոնարհեցաւ ժողովուրդն և երկիր եպագ։

տակաւին=դեռ. խոնարհել=վայր ընկնել.
դրաստ=բեռնակիր. նշան=հրաշք, զարմանալի բան.
անասուն, տաւար.
Ծերակոյտ=ծերերի ժողով, երկիր պագանել=դեմքնը համբուրել.
խորհուրդ.

Լուծել՝ առ աներ, առ եղբարս, յԵգիպտոս, ի դրաստս. զկին, զմանկունս, զնոսա, զամենայն պատգամսն, զամենայն ծերակոյտ, զոր, նշանս. իմ, իւր, որդւոցն, առաջի ժողովրդեան, Մովսիսի, Ահարոնի, ընդ Մովսիսի:

Ը. ԵՐԿԻՐՆ ԱՒԵՏԵԱՅ

30. Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ.
«առաքեա՛ արս և լրտեսեսցեն զերկիրն, զոր ես տայ որդւոցն Իսրայէլի»։
Եւ առաքեաց զնոսա Մովսէս յանապատէն և ասէ.
«ելէք ընդ անապատդ.
և ամբարձա՛յք ի լեառնն,
և տեսջի՛ք զերկիրն.
և ժրասջի՛ք, առջի՛ք ի պտղոյ երկրին»։

լրտեսել=ծածուկ լուր առնել. ժրանալ=ժիր լինել, աշխատել.
ամբառնալ=բարձրանալ վեր ելնել. ելանել=գնալ, անցնել.

Լուծել՝ խօսեցաւ, առաքեաց. լրտեսեսցեն. տայ, առաքեա՛. ելէք, ամբարձա՛յք, տեսջի՛ք, ժրասջի՛ք, առջի՛ք. յանապատէն, ի պտղոյ. ընդ Մովսիսի. որդւոցն, ընդ անապատդ, ի լեառն, ցնոսա. արս, զերկիրն, զնոսա, Իսրայէլի, երկրին:

31. Ելին ընդ անապատն.
և եկին մինչև ցձորն ողկուզոյ.
և լրտեսեցին զնա.
և հատին անտի ուռ որթոյ և ողկոյզ խա-
զողոյ ի նմա.
և բարձին զնա լծակօք։
Եւ դարձան անդրէն որդիքն Իսրայէլի յետ
աւուրց քառասնից.
և հասին առ Մովսէս և առ Ահարոն և առ
ամենայն ժողովուրդ Իսրայէլի.
և ետուն նոցա զրոյց. և ցուցին զպտուղ երկրին։

ողկոյզ=խաղողի ճութ. բառնալ=վերցնել, տանել.
հատանել=կտրել. լծակ=երկար ձող, ըեռ
վերցնելու գործիք.
անտի=նորանից, զրոյց=խօսք, լուր,
այնտեղից. տեղեկութիւն.
ուռ=ճիւղ, ձող. ցուցանել=ցոյց տալ.
որթ=խաղողի թուփ վազ. հասանել=հասնել.

Լուծել՝ ելին, եկին, լրտեսեցին, հատին, բարձին, հասին, ցուցին, ետուն, դարձան. ընդ անապատն, ցձորն, ողկուզոյ, խաղողոյ, յետ աւուրց քառասնից, երկրին. ի նմա, լծակօք։

32. Եւ պատմեցին նոցա և ասեն.
«Չոգաք յերկիր, յոր առաքեցեր զմեզ.
երկիր ըղձէ զկաթն և զմեղր.
և այս է պտուղ նորա.
բայց ազգն սաստիկ էր.
քաղաքք ամուրք և պարսպաւորք և մեծա-
մեծք յոյժ.
ի նմա արք յաղթահասակք են.

տեսաք անդ և սկայս.
և էաք յաչս նոցա իբրև մարախ»։

չոգաք=գնացինք. սկայ=հսկայ, վահլէվան.
սաստիկ=զօրեղ, ուժով. մարախ=մորեխ.
պարսպաւոր=պատերով. յոյժ=շատ, խիստ.
բոլորած. յաղթահասակ=բարձր
մեծամեծ=շատ մեծ. հասակով.

Լուծել՝ պատմեցին, առաքեցեր, տեսաք, էաք, յոր, սկայս, իբրև մարախ. ի նմա, յաչս, նորա, նոցա։

33. Եւ ձայն բարձին ամենայն ժողովուրդն.
և ելաց ազգն զգիշերն ողջոյն.
և տրտնջեաց ժողովուրդն զՄովսիսէ և
զԱհարոնէ
և ասէ ցնոսա ամենայն ժողովուրդն.
«լաւ էր, եթէ մեռեալ էաք յերկրին Եգիպ-
տացւոց.
կամ թէ յանապատի աստ իսկ մեռանէաք.
և արդ լաւ իցէ մեզ դառնալ անդրէն յԵ-
գիպտոս»։

ձայն բառնալ=ձայն ելաց=լաց եղաւ.
բարձրացնել, աղաղակել. տրտնջել=արտնջալ
ողջոյն=բոլոր, ողջ. դժգոհ լինել.

Լուծել՝ բարձին, ելաց, տրտնջեաց, մեռանէաք էաք, իցէ. զՄովսիսէ, զԱհարոնէ. յերկրին, յանապատի. ցնոսա, յԵգիպտոս. զգիշերն ողջոյն։

Թ. ԿՈՉՈՒՄՆ ԳԵԴԷՈՆԻ

34. Եւ արարին որդիքն Իսրայէլի չար առաջի Տեառն.
և եհան զնոսա Տէր ի ձեռս Մադիամու ամս եօթն,
և արարին որդիքն Իսրայէլի գոմս ի լերինս և յայրս և յամուրս.
և լինէր, իբրև վարէր այր Իսրայէլի, ելանէր Մադիամ և ապականէր զբերս երկրին։

Գտնել հետեւեալ խօսքերը՝ առնել, տալ, լինել, վարել, ելանել։

արարին չար=չար գործ արին մեղք գործեցին.
եհան ի ձեռս=ձեռքը տուեց մատնեց.
արարին գոմս=գոմեր շինեցին.
այր=քարայր, մտղարայ (այրև. այրեւ).
ամուրս=ապահով տեղ.
բերք=պտուղ, բարի.
ապականել=փչացնել.
այր=տղամարդ (առն, արամբ)

Լուծել՝ արարին, եհան, լինէր, վարէր, ապականէր, ելանէր. յայրս, ի լերինս, յամուրս, ի ձեռս. չար, զնոսա, գոմս, զբերս։ ամս եօթն. Իսրայէլի, Մադիամու, երկրին, առաջի Տեառն. իբրև վարէր. ելանէր Մադիամ։

35. Եւ հասանէին իբրև զմարախ.
և ոչ գոյր թիւ նոցա և ուղտուց իւրեանց.
և աղքատացաւ Իսրայէլ յոյժ.

և աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր։
և եկն հրեշտակ Տեառն,
և նստաւ ընդ կաղնեաւն։
Եւ Գեդէոն ծեծէր ցորեան ի կալ.
և երևեցաւ նմա հրեշտակ Տեառն
և ասէ ցնա.
Տէր ընդ քեզ։
Եւ ասէ ցնա Գեդէոն,
Եթէ էր Տէր ընդ մեզ, ընդէր գտին զմեզ ամենայն չարիքս այսոքիկ։

Գտնել հետեւեալ բառերը՝ հասանել, գալ, նստել, գտանել, այս, նա։

ոչ գոյր=չկար.
ընդէր=ինչու.
ընդ կաղնեաւն=կաղնի ծառի տակ.
չարիք=անբաղդութիւն, վնաս.

Լուծել՝ հասանէին, ծեծէր, ոչ գոյր, աղքատացաւ աղաղակեցին, երևեցաւ, գտին. ուղտուց, իւրեանց, Տեառն. իբրև զմարախ. ցորեան, ընդ քեզ, ընդ մեզ, նմա, ընդ կաղնեաւն։

36. Եւ հայեցաւ ընդ նա հրեշտակն Տեառն
և ասէ ցնա.
Երթ զօրութեամբդ քով այդուիկ
և փրկեսցես զԻսրայէլ ի ձեռաց Մադիամու։
Եւ ասէ Գեդէոն.
«արասցես ինձ նշան, եթէ խօսեսցիս ընդ իս.
մի գնասցես աստի, մինչև եկից առ քեզ
և բերից զպտղ իմ և եդից առաջի քո»։
Եւ ասէ. Ես եմ. և նստայց ասա, մինչև

դարձցիս առ իս։
Եւ եմուտ Գեդէոն.
և հասոյց ուլ մի յայծեաց
և արդու մի ալիւր բաղարջ.
և զմիսն եդ ի վերայ խանի.
և զարգանակն արկ ի պոյտն.
և եհան առ նա ընդ կաղնեաւն։
և երկիր եպագ։

Գտնել հետեւեալ բառերը՝ բերել, դալ, դնել, մտանել, արկանել, հանել, պագանել, այդ. ես։

նշան առնել=նշան ցոյց ընդ իս=ինձ հետ. տալ, հրաշք անել.
արասցես ինձ նշան=ինձ զոհ մատաղ. մի նշան տուր.
այծիք=այծերի հօտ. խան=սենի, մեծ ավսէ.
արդու=չանախ, ման. արդանակ=մսի ջուր, չորպա,
բաղարջ=անխմոր, անեկ. պոյտն=պուտուկ, ման.
հասուցանել=հասցնել, բերել.

Լուծել՝ երթ, արասցես, մի՛ դնասցես, եմուտ, հասոյց, եդ, արկ, եհան, եպագ, եկից, բերից, եդից, նստայց, դարձցիս. առ քեզ, ի պոյտն, ընդ նա, ընդ իս. յայծեաց, ի վերայ խանի. ընդ կաղնեաւն, զօրութեամբդ քով այդուիկ. արդու մի ալիւր բաղարջ։

37. Եւ ասէ ցնա Հրեշտակն Տեառն.
«առ դու զմիսդ և զհացդ բաղարջ.
և դիր ի վերայ վիմին այնորիկ,
և հեղ զարգանակն։»
Եւ արար այնպէս։

Եւ ձգեաց Հրեշտակն Տեառն զծայր գաւազանին.
և հասոյց ի միսն և ի բաղարջն.
և բորբոքեցաւ հուր ի վիմէ անտի.
և եկեր զմիսն և զբաղարջն։
Եւ Հրեշտակն Տեառն գնաց յաչաց նորա։

Գտնել հետեւեալ բառերը՝ առնուլ, դնել, առնել, տէր, աչք։

վէմ=քար, ժայռ.
հասուցանել=հասցնել, մօտեցնել.
ի վիմէ անտի=այն քարից.
բորբոքիլ=վառուիլ, բոց լինել.
հեղուլ=թափել, ածել, լցնել.
եկեր=կերաւ, սչնչացուց.

Լուծել՝ հե՛ղ, հասոյց, բորբոքեցաւ, եկեր, գնաց. ի վերայ վիմին այնորիկ, ի վիմէ, յաչաց.

38. Եւ հոգի Տեառն զօրացոյց զԳեդէոն.
և եհար փող եղջերաւն.
Եւ արձակեաց Հրեշտակս։
Եւ ասէ Գեդէոն ցԱստուած.
«ահա դնեմ զգաթ մի ասուի ի կալ.
եթէ լինիցի անձրև ի վերայ գզաթուն միայն,
և ի վերայ ամենայն երկրի ցամաքութիւն,
գիտացից, եթէ փրկեսցես ձեռամբ իմով զԻսրայէլ»։
Եւ կանխեաց Գեդէոն ընդ առաւօտն.
և քամեաց զգզաթն.
և էջ ցօղ ի գզաթէ անտի լի կոնքիւ ջրոյ։

Գտնել հետեւեալ բառերը՝ փրկել, գիտել, ինչանել. ձեռն, տէր։

զօրացուցանել—ոյժ տալ, զօրացնել.
զգաթ մի առուի—մի կտուր բուրդ.
փող հարկանել—փող փչել.
կանխել—շտապել, գնալ.
եղջիւր—կոտոշ, պող.
կոնք—թաս, լական.
գզաթ—բուրդի կտոր.
ցող—շաղ, ջուր.
լի—լեռը.

Լուծել՝ զօրացոյց, եհար, կանխեաց, էջ, եղջերաւն, կոնքիւ, ձեռամբ, եմոլ, ի կալ, ընդ առաւօտն, ի վերայ գզաթուն, ի վերայ ամենայն երկրի, ի գզաթէ։

39. Եւ ասէ Գեդէոն ցԱստուած.
«փորձեցից միւս անգամ զգզաթուն.
և եղիցի միւս անգամ ցամաքութիւն ի վերայ գզաթուն միայնոյ.
և ի վերայ ամենայն երկրի եղիցի անձրև»։
Եւ արար Աստուած այնպէս ի գիշերին յայնմիկ։
Եւ բաժանեաց Գեդէոն զերեքհարիւր այրն յերիս առաջս.
և եհ զփողն եղջերայս ի ձեռս ամենեցունց,
և ջահս ի մէջ սափորոցն։
Եւ ասէ ցնոսա.
Ընդ իս հայեսջիք, և այնպէս արասջիք.
և հարից ես զփողն եղջերեայ,
հարջիք և դուք զփողսն եղջերայս.
և ասասջիք. Սուր Տեառն և Գեդէոնի։

Գտնել հետեւեալ բառերը՝ փորձել, տալ, հայել, հարկանել, առնել, առել։

առաջ—գունդ, մաս, բաժին
սափոր—ծափ, ման.
եղջերեայ—եղջիւրից շինած, կոտոշէ.
եղիցի—թող լինի.
ջահ—լապտեր, ճրագ.
գզաթուն—գզաթով.

Լուծել՝ փորձեցից, եղիցի, հայեսջիք, արասջիք, հարջիք, ասասջիք, գզաթուն, ի վերայ գզաթուն միայնոյ, ի վերայ ամենայն երկրի, ի մէջ սափորոցն, ի գիշերին յայնմիկ, ընդ իս, յերիս առաջս։

40. Եւ եմուտ Գեդէոն և հարիւր այր ընդ նմա
ի կողմն բանակին.
զարթուցին զպահապանսն.
և հարին զփողսն եղջերայս.
և թօթափեցին զսափորսն։
Եւ հարին զփողսն եղջերայս երեքին առաջքն.
և խորտակեցին զսափորսն.
և առին ձախու ձեռամբք զջահսն
և աջու ձեռաք իւրեանց զփողսն հարկանել.
և աղաղակեցին և ասեն,
Սուր Տեառն և Գեդէոնի։
Եւ դոչեցին երեքհարիւրեքին փողքն եղջերայք.
և փախեաւ ամենայն բանակն։
Եւ ասէ Գեդէոն,
«Իջէք յառաջս Մադիամու.
և կալարուք զկիրճս ջրոցն։»
Եւ դոչեաց ամենայն այր.
և կալան զանցս ջրոց.
և հալածեցին զՄադիամ.

*

Դնել հեռեւեալ բառերը՝ հարկանել, առնուլ, փախչիլ. ջուր, ձեռն։

առին հարկանել=սկսեցին զարնել, խփել.
երեքհարիւրեքին փողքն=բոլոր երեք հարիւր փողը միասին.
կալնուլ=բռնել, կապել. կալարուք=բռնեցէք.
կալան=բռնեցին.
թօթափել=թափ տալ, հալածել=քշել, վռնտել. թօթուել.
գոչել=գոռալ, գոռգոռալ. կիրճ=նեղ ճանապարհ, լեռնային անցք.

Լուծել՝ հարին, խորտակեցին, առին, փախեաւ, ելէք, կալարուք, կալան, գոչեաց, հալածեցին, ձեռամբք, ձեռօք, յառաջս, զկիրճս, զանցս։

Ժ. ԱՌԱԿ

Առն միոջ էին երկու որդիք. և մատուցեալ առ առաջինն ասէ. Որդեակ, երթ այսօր, գործեա յայգւոջ։ Նա պատասխանի ետ և ասէ. Երթամ, Տէր. և ոչ չոգաւ։ Մատեաւ և առ միւսն և ասէ նոյնպէս։ Նա պատասխանի ետ և ասէ. Ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ յայգին։

ԺԱ. ՊԱՍԵՐ

Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասէրն։ Եւ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս և ասէ. Երթայք, պատրաստեցէք մեզ զպասէրն, զի կերիցուք։ Եւ նոքա ասեն. Ո՞ւր կամիս, զի պատրաստեսցուք։ Եւ ասէ ցնոսա. «Ահա

իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տունն, յոր մտանիցէ, և ասասջիք ցտանուտէր տանն. Վարդապետ ասէ քեզ. Ո՞ւր են վանքն իմ, յորում զպասէքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ. և նա ցուցցէ ձեզ վերնատունն մի մեծ զարդարեալ. և անդ պատրաստեսջիք։» Եւ գնացեալ գտին, որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զպասէքն։ Եւ իբրև ժամ եղև, բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։

ԺԲ. ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Եւ ի լինել ընթրեացն յառնէ Յիսուս յընթրեաց անտի և դնէ զհանդերձսն։ Եւ առեալ զենջակ մի սփածաւ. և ապա առեալ ջուր արկ ի կոնք. և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և սրբէր զենջեկաւն, զոր սփածեալ էր։ Գայ առ Սիմովն Պետրոս. և նա ասէ ցնա. «Տէր, դու զի՞մ զոտս լուանաս։» Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս. Ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան։ Պատասխանի ետ Յիսուս. Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն։ Եւ յորժամ լուաց, առ զհանդերձսն իւր և դարձեալ բազմեցաւ։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Б...
7/XI 1922
Ереван, Мясник...
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

ԺԳ. ԿԱՆՈՆԱԻՈՐ ԽՈՆԱՐՀՈՒՄՆ

Խոնար. համար	Դէմք	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ		ՍԱՀՄԱՆ. ԱՆԿԱՏԱՐ		ՍՏՈՐԱԴԱՍ. ԱՊԱՌՆԻ		ՍԱՀՄԱՆ. ԿԱՏԱՐԵԱԼ		ՍԱՀՄԱՆ. ԱՊԱՌՆԻ		ՀՐԱՄ. ՆԵՐԿԱՅ	
		Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
1.	1	հեղում	հեղումք	հեղուլ	հեղուաք	հեղուցում	հեղուցումք	հեղն	հեղաք	հեղից	հեղցուք	«	«
	2	հեղուս	հեղուք	հեղուլիր	հեղուլիք	հեղուցուս	հեղուցուք	հեղեր	հեղիք	հեղցես	հեղջիք	հե՛ղ	հեղէ՛ք
	3	հեղու	հեղուն	հեղոյր	հեղուլն	հեղուցու	հեղուցուն	հեղ, եհեղ	հեղին	հեղցէ	հեղցեն	«	«
2.	1	կարդամ	կարդամք	կարդայլ	կարդայաք	կարդացեմ	կարդայցեմք	կարդացի	կարդացաք	կարդացից	կարդացուք	«	«
	2	կարդաս	կարդաք	կարդայլիզ	կարդայլիք	կարդացես	կարդայցեք	կարդացեր	կարդացիք	կարդացես	կարդաջիք	կարդա՛	կարդացէ՛ք
	3	կարդայ	կարդան	կարդայր	կարդայլն	կարդացէ	կարդայցեն	կարդաց	կարդացին	կարդացէ	կարդացեն	«	«
3.	1	գրեմ	գրեմք	գրէի	գրէաք	գրիցեմ	գրիցեմք	գրեցի	գրեցաք	գրեցիցի	գրեցուք	«	«
	2	գրես	գրէք	գրէիր	գրէիք	գրիցես	գրիցէք	գրեցեր	գրեցիք	գրեցես	գրեջիք	գրեա՛	գրեցէ՛ք
	3	գրէ	գրեն	գրէր	գրէին	գրիցէ	գրիցեն	գրեաց	գրեցին	գրեցէ	գրեցեն	«	«
4.	1	խօսիմ	խօսիմք	խօսէի	խօսէաք	խօսիցեմ	խօսիցեմք	խօսեցայ	խօսեցաք	խօսեցայց	խօսեցուք	«	«
	2	խօսիս	խօսիք	խօսէիր	խօսէիք	խօսիցես	խօսիցիք	խօսեցար	խօսեցայք	խօսեցիս	խօսեջիք	խօսեա՛ց	խօսեցարո՛ւք
	3	խօսի	խօսին	խօսէր	խօսէին	խօսիցի	խօսիցին	խօսեցաւ	խօսեցան	խօսեցի	խօսեցին	«	«
5.	1	մոռանամ	մոռանամք	մոռանայլ	մոռանայաք	մոռանայցեմ	մոռանայցեմք	մոռացայ	մոռացաք	մոռացայց	մոռացուք	«	«
	2	մոռանաս	մոռանաք	մոռանայիր	մոռանայիք	մոռանայցես	մոռանայցեք	մոռացար	մոռացայք	մոռացիս	մոռաջիք	մոռացի՛ր	մոռացարո՛ւք
	3	մոռանայ	մոռանան	մոռանայր	մոռանայլն	մոռանայցէ	մոռանայցեն	մոռացաւ	մոռացան	մոռացի	մոռացին	«	«
6.	1	թագչիմ	թագչիմք	թագչէի	թագչէաք	թագչիցեմ	թագչիցեմք	թագեայ	թագեաք	թագեայց	թագիցուք	«	«
	2	թագչիս	թագչիք	թագչէիր	թագչէիք	թագչիցես	թագչիցիք	թագեար	թագեայք	թագիցիս	թագիջիք	թագի՛ր	թագերո՛ւք
	3	թագչի	թագչին	թագչէր	թագչէին	թագչիցի	թագչիցին	թագեաւ	թագեան	թագիցի	թագիցին	«	«
7.	1	փախնում	փախնումք	փախնուլ	փախնուաք	փախնուցում	փախնուցումք	փախեայ	փախեաք	փախեայց	փախցուք	«	«
	2	փախնուս	փախնուք	փախնուլիր	փախնուլիք	փախնուցուս	փախնուցուք	փախեար	փախեայք	փախցիս	փախջիք	փախի՛ր	փախերո՛ւք
	3	փախնու	փախնուն	փախնոյր	փախնուլն	փախնուցու	փախնուցուն	փախեաւ	փախեան	փախցի	փախցին	«	«
8.	1	տեսանեմ	տեսանեմք	տեսանէլ	տեսանէաք	տեսանիցեմ	տեսանիցեմք	տեսի	տեսաք	տեսից	տեսցուք	«	«
	2	տեսանես	տեսանէք	տեսանէիր	տեսանէիք	տեսանիցես	տեսանիցէք	տեսեր	տեսիք	տեսցես	տեսջիք	տե՛ս	տեսէ՛ք
	3	տեսանէ	տեսանեն	տեսանէր	տեսանէին	տեսանիցէ	տեսանիցեն	տես, եւ տես	տեսին	տեսցէ	տեսցեն	«	«
9.	1	ուսանիմ	ուսանիմք	ուսանէլ	ուսանէաք	ուսանիցեմ	ուսանիցեմք	ուսայ	ուսաք	ուսայց	ուսցուք	«	«
	2	ուսանիս	ուսանիք	ուսանէիր	ուսանէիք	ուսանիցես	ուսանիցիք	ուսար	ուսայք	ուսցիս	ուսջիք	ուսի՛ր	ուսարո՛ւք
	3	ուսանի	ուսանին	ուսանէր	ուսանէին	ուսանիցի	ուսանիցին	ուսաւ	ուսան	ուսցի	ուսցին	«	«

Հոլովումներ	ԺԴ. ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՈՒՄՆ							
	ՈՒՂՂԱԿԱՆ		ՍԵՌԱԿԱՆ		ԲԱՑԱՌԱԿԱՆ		ԳՈՐԾԻԱԿԱՆ	
	եզակի	յոգնակի	եզակի	յոգնակի	եզակի	յոգնակի	եզակի	յոգնակի
1.	ակն անձն	ակունք անձինք	ական անձին	ականց անձանց	յականէ յանձնէ	յականց յանձանց	ակամբ անձամբ	ակամբք անձամբք
2,	արիւն	արիւնք	արեան	արեանց	յարենէ	յարեանց	արեամբ	արեամբք
3.	եղբ աստղ	եղերբ աստեղք	եղեր աստեղ	եղերց աստեղց	յեղերէ յաստեղէ	յեղերց յաստեղց	եղերբ աստեղբ	եղերբք աստեղբք
4.	դերի Զարուհի	դերիք —	դերոյ Զարուհեայ	դերեաց —	ի դերոյ ի Զարուհեայ	ի դերեաց —	դերեաւ —	դերեօք —
5.	աշխարհ Վահան	աշխարհք —	աշխարհի Վահանայ	աշխարհաց —	յաշխարհէ ի Վահանայ	յաշխարհաց —	աշխարհաւ Վահանաւ	աշխարհօք —
6.	բան	բանք	բանի	բանից	ի բանէ	ի բանից	բանիւ	բանիւք
7.	աթոռ	աթոռք	աթոռոյ	աթոռոց	յաթոռոյ	յաթոռոց	աթոռով	աթոռովք
8.	դրաստ	դրաստք	դրաստու	դրաստուց	ի դրաստու	ի դրաստուց	դրաստու	դրաստուք

ՀՀ Ազգային գրադարան
NL0246313

8554

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց,
Վիէննայ 1877·
Գիրք առաջին՝ դրաբառ բնագիրը·
Գիրք երկրորդ՝ աշխարհաբառ թարգմանութիւնը (Բ· տպ· Թիֆլ· 1894):
Գիրք երրորդ՝ ծանօթութիւններ·
Հայոց հեթանոսական կրօնը Վ.ղրշպտ· 1879·
Ստեփաննոս Օրպէլեան Ողբ ի ս· Կաթուղիկէն·
Թիֆլիս 1885·
Հայոց վանքերը, Մոսկով 1886·
Թովմայ Մեծոփեցու Ցիշատակարանը, Թիֆլ· 1892·
Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը, Թիֆ· 1892
Նոր Ժողովածու, Միջնադարեան Հայոց տաղեր ու ոտանաւորներ·
Ա· պրակ· Թիֆլիս· 1892·
Բ· պրակ· Թիֆլիս· 1892·
Գ· պրակ· Թիֆլիս· 1896·
Դ· պրակ Վ.ղրշպտ· 1905·
Համամ արեւելցի, Վ.աղարշապատ 1896·
Ս· Լուսաւորչի աջը, Վ.աղարշապատ· 1896·
Տ· Պետրոս Ա· Գետադարձ, Վ.աղարշապատ 1897·
Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը Թիֆ· 1898·
Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, Վ.ղրշպտ· 1898·
Շարժի տարեգրութիւնն Հայոց մէջ, Թիֆլ· 1902·
Յակոբը Կարնեցի, Վ.աղարշապատ 1905·

ԳԱՍԱԳՐՔԵՐ

Դրաբառի խոնարհումը, Թիֆլիս 1881
Դրաբառի հոլովումը, Թիֆլիս 1881·
Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից, յերիս շրջանս· Թիֆլիս 1881
Ծաղկաքաղ Ա· շրջան (Դ· տպագր·) Թիֆլ· 1894·
Ծաղկաքաղ Բ· շրջան (Բ· տպագր·) Թիֆլ· 1894
Բառացուցակ Ա· ծաղկաքաղի համար· Թիֆլ· 1885·
Նախաշաւիղ (Դ· տպագր·) Վ.աղարշապատ 1905

Դիմել Թիֆլիս, Կեսրոնական Գրավաճառանոց·